Ավարտական Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Միջառարկայական կապեր և ընդհանրական հասկացություններ. դրանց կիրառությունը «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դասերին, ինտեգրված դասերի կազմակերպումը

Կատարող՝ Նարինե Տոնապետյան

Դպրոց՝ Այնթապի հ. 2 միջնակարգ դպրոց

Առարկա՝ Հայոց լեզու և հայ գրականություն

Կազմակերպություն՝ ,«Երևանի Լեոյի անվան հ.65 ավագ դպրոց »ՊՈԱԿ

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Առաջաբան

Ինտեգրված ուսուցումը մանկավարժական գործընթացի կարևորագույն բնագավառներից մեկն է, որը կապված է նախկինում անհամեմատելի մասերի միավորումների հետ: Ինտեգրված դասը երեխայի զարգացման մեջ մեծ դեր ունի: Ինտեգրված դասի նպատակն է ուսումնական նյութի բազմաշերտ ընկալումը, սովորողների գիտելիքների, փորձառությունների և հմտությունների համատեղումը, գիտական աշխարհայացքի ձևավորումը, տրամաբանական մտածողության զարգացումը: Ուսումնական գործընթացում միջառարկայական կապերի իրականացումը կարող է ապահովվել հետևյալ միջոցներով.

1. հարցերի շարադրում
2. առանձին առաջադրանքների հանձնարարում
3. ճանաչողական առաջադրանքների կատարում
4. հետազոտական բնույթի աշխատանքների կատարում

Ուսուցչի մասնագիտական պատրաստվածության և ուսուցման ժամանակակից իմացությամբ և դրանք ճիշտ կիրառելու հմտությամբ է պայմանավորված ոչ միայն աշակերտի կրթվածության ցուցանիշը, այլև նրա արժեհամակարգի ձևավորումը և մարդկային դրական որակների ձեռքբերումը: Ուսուցման մեթեդների շարքում հետաքրքիր են միջառարկայական և ներառարկայկան կապերը:

Միջառարկայական կապեր



Միջառարկայական կապերը դասակարգվում են՝ ըստ բաղադրության, ըստ ուղղվածության, ըստ ֆունկցիաների:

Միջառարկայական կապերի բոլոր ֆունկցիաների արդյունավետ ու միաժամանակյա կիրառումը հնարավոր է իրականացնել դասի միջոցով:

Յ. Ա Կոմենսկին իր «Մեծ դիտակտիկա» աշխատության մեջ նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապացված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով, նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ չի կարող լինել: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցության մեջ»:

Միջառարկայական կապերի տեսակներից է գրականության և պատմության կապը, որը նպաստում է պատմական նյութի խորքային իմացությանը, դասը դարձնում բովանդակալից և հետաքրքիր: Շատ կարևոր է պատմականի և ներկայի համաժամանակյա քննությունը, պատմականի և գեղարվեստականի խաչաձևումը:

Այս դեպքում մենք գործ ունենք գրական մի շատ նուրբ խնդրի հետ: Ի՞նչ չափով է գրողն ազատ պատմական փաստերի մեկնաբանման հարցում: Գրողը ոչ թե պատմական ուսումնասիրություն է գրում, այլ՝ գեղարվեստական երկ: Նրանից սպասում են ոչ թե կոնկրետ փաստերի ճշգրիտ վերարտադրություն, այլ՝ գեղարվեստական ընդհանրացումներ և գեղարվեստական ճշմարտություն:

Գրողի ընկալումները կարող են տարբեր լինեն հասարակության մեջ ընդունված տեսակետներից: Գրողի աշխատանքը պատմաբանի աշխատանքից տարբերվում է նրանով, որ նա հենց իր ընկալած ճշմարտությունն է ներկայացնում: Տեղին է նշել Կ. Զարյանի միտքը «Ամեն մի անհատ, դասակարգ կամ մի ազգ գիտակցում և ըմբռնում է պատմության ամբողջությունն այնքան, ինչքան այդ պատմությունն անբաժանելի մաս է կազմում իր ներքին զարգացման հետ: Դեպքերի վրա կարելի է նույնպես ազդել՝ բացահայտելով նրանց:»

Պատմականի և ներկայի համաժամանակյա քննություն կարելի է անցկացնել՝ քննարկելով Կ. Զարյանի «Նավը լեռան վրա», Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր»

վեպերը, Ե. Չարենցի ստեղծագործությունները՝ «Ամբոխները խելագարված», «Խմբապետ Շավարշը» և այլ պոեմներ:

Կարելի է ներկայացնել պատմական ժամանակաշրջանը, ստեղծագործությունների միջոցով ծանոթանալ գրողի տեսակետին և քննարկել ստեղծագործության արդիականությունը: Օրինակ՝ վերոնշյալ ստեղծագործությունները քննարկելիս նշել, որ՝ հայոց պատմության նորագույն շրջան հայ ժողովուրդը մուտք գործեց շատ բարդ ու խառնակ իրադրության հանգամանքներում: Հատկապես 1918 թ. գարունը բախտորոշ էր մեզ համար: Ի-ին աշխարհամարտը դեռ չէր ավարտվել, Օսմանյան կայսրությունը դեռևս շարունակում էր ռազմական գործողությունները Արևելյան ճակատում, իսկ հեղափոխական Ռուսաստանը փաստորեն հայ ժողովրդին կանգնեցրեց լիակատար ոչնչացման վտանգի առաջ: Այդ օրհասական պահին Հայ հեղափոխական դաշնակցությունը ստանձնեց Կովկասյան ճակատը պահելու դժվարին առաքելությունը: 1918 թ.-ի մայիսյան հերոսամարտերը ապացուցեցին, որ հայերի հավանական կամքը կոտրել անհնար է, և հաղթանակները ապահովեցին արևելահայության և բազմահազար արևմտահայ գաղթականության ապրելու իրավունքը: Փայլեց Դրոյի զորավարական տաղանդը: Խմբապետների հարաբերությունները Ռուսաստանից եկած հայ զինվորական հրամանատարության հետ լարված էին: Պարզ էր, որ անհատ վրիժառուները, ինչպիսիք էին Անդրանիկը, Դրոն, Շավարշը դժվարությամբ պիտի ենթարկվեին հրամատարությանը, մանավանդ, որ իրենք իրենց զորավարական տաղանդով չէին զիջում ոչ մեկին:
Դրոն նշանակվեց զինվորական նախարար և հենց նրան էր վիճակված հանձնել իշխանությունը բոլշևիկներին: Իհարկե, Դրոն գիտակցում էր այդ որոշման ճակատագրական լինելը, բայց ստեղծված քեմալաբոլշևիկյան սերտ դաշինքը այլընտրանք չէր թողել հայ ժողովրդի համար: Դրոյին մեղադրում են ռուսամետ կեցվածքի, 1-ին հանրապետության անկումը արագացնելու մեջ: Սակայն արդեն 1921 թ. փետրվարին բոլշևիկյան կառավարության վարած քաղաքականությունը բռնություններն ու հալածանքները ապացուցեցին բոլշևիկների իրական նպատակները: Այնուամենայնիվ գտնվեցին գործիչներ, ովքեր հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը կապում էին Խորհրդային միության կազմում գտնվելու հետ: Եվ անշուշտ, այս գաղափարները իրենց արտացոլումն են գտել այս շրջանի գրողների ստեղծագործություններում:

Գրականություն-պատմություն միջառարկայական կապը կարելի է ստեղծել պատմավեպերի ուսուցման ժամանակ: Ներկայացնել պատմական ժամանակաշրջանը, քաղաքական իրավիճակը: Այնուհետև անդրադառնալ պատմավեպին, գրողի ստեղծագործական երևակայությանը:

պատմական փաստ	պատմավեպ

Ինտեգրված դաս կարելի է կազմակերպել՝ գրական ստեղծագործության և համանուն ֆիլմի քննարկումով:

Մտային գրոհ կազմակերպել՝ աշակերտների հետ քննարկելով երկու ստեղծագործությունների՝ գրական ստեղծագործության և համանուն ֆիլմի ընդհանուր առանձնահատկություններն ու տարբերութունները: Դրանք գրանցել նմանությունների և տարբերությունների սյունյակում: Անհրաժեշտ է սկսել ընդհանրություններից: Այս սյունյակը լրացնելուց հետո ուսուցիչը և աշակերտները ձեռնարկում են տարբերությունների բացահայտումը:

Ընդհանրություն	տարբերություն
Գաբրիել Սունդուկյնան «Պեպո» կատագերգություն	
Հրանտ Մաթևոսյան «Աշնան արև» վիպակ	

Միջառարկայական կապ կարելի է ստեղծել գրականության և աշխարհագրության, հայոց լեզվի և աշխարհագրության միջև:



Գրականությունը, հայոց լեզուն կարող են ընտրվել որպես միջոց աշխարհագրության ուսումնասիրության: Կարելի է կազմել հարցաշարեր և՛ գրականությունից, և՛ հայոց լեզվից: Օրինակ՝ Հովհաննես Թումանյանի ստեղծագործության մեջ բանաստեղծական շնչավորում ստացած գետ՝ հայ գյուղի կյանքը պատկերող հայտնի պոեմում.

Խելագար թռչում քարերի գլխով,
Փրփուր է թքում անզուսպ երախով,
Թքում ու զարկում ժեռուտ ափերին,

Փտրում է ծաղկած ափերը հին-հին,
Ու գոռում գիժ-գիժ.
— Վա՛շ-վի՛շ, վա՛շ-վի՛՛շ. . .

ա) Պոեմի վերնագիրը («Լոռեցի Սաքոն»)
բ) գետի անվանումը (Դեբետ)
գ) ակունքը (Ձորագետի և փամբակի միախառնումից է առաջանում Դեբետը)
դ) գետաբերանը (միանում է Խրամ գետին, և թափվում են Կուր գետը)
ե) Ի՞նչ տարածքներով է հոսում (Հայաստան և Վրաստան)

Հայոց լեզվի և աշխարհագրության միջև միջառարկայական կապ կարելի է ստեղծել օրինակ՝ բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը ուսուցանելիս: Կարելի է կազմել հարցաշար: Օրինակ

1. Մուշեղ Գալշոյանի ժողովածուի վերնագրում հիշատակվող սար (Մարութա սար, Մարաթուկ)
2. Այդ սարի աշխարհագրական դիրքը (հայկական լեռնաշխարհով ձգվում է Հայկական Տավրոսը, որի արևելյան մասում Սասնա լեռնաբազուկն է՝ Մարութա գագաթով):
3. Ժողովրդական բանահյուսության մեջ հիշատակվում է ----- կամ ----- էպոսում: («Սասունցի դավիթ» կամ «Սասնա ծռեր»)
4. Ա. Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքում հիշատակվող գետը: (Բասուտա)
5. Այդ գետի ակունքը (Սյունիքի մարզի Խուստուփ լեռնազանգվածի լանջից):
6. Ո՞ր հայ գրողը ո՞ր լճի որ կղզում է, այդ լճի գեղեցկությամբ հափշտակված, գրել «Ձա՛յն տուր, ո՛վ ծովակ» բանաստեղծությունը:
7. Լիճն ինչպե՞ս էին անվանել նախկինում (Տոսպա լիճ, Բզնունյաց ծով, Ռշտունյաց լիճ, Վասպուրականի ծով):

Բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությանը և աշխարհագրության իմացությանը կնպաստի հետևյալ առաջադրանքը: Գրել եվրոպական պետությունների անունները՝ ըստ կառավարման կարգի:

Միջառարկայական կապ կարելի է ստեղծել կերպարվեստի և գրականության, ճարտարապետության և գրականության միջև:

Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունները, հատկապես «Մեղեդի ծննդյան» տաղը ուսումնասիրելիս Լեոնարդո դա Վինչիի «Մոնա Լիզա» կամ «Մադոննա Լիտա կտավները ուսումնասիրել, համեմատել ստեղծագործության հետ՝ եզրահանգելով, որ Աստվածածինը կրում է երկնային և երկրային լույսն ու գեղեցկությունը, մաքրությունը, հանդես է գալիս որպես իրական չքնաղ ու հմայիչ կին: Եվ վերջապես աշխարհիկի և հոգևորի ներդաշնակությունից է ծնվում գեղեցկությունը:



Հայրենասիրական բանաստեղծությունները ուսումնասիրելիս ևս կարելի է անդրադառնալ կերպարվեստին: Զուգահեռներ անցկացնեն Մ. Սարյանի նկարների և Հ. Սահյանի, Պ. Սևակի, Ե. Չարենցի հայրենասիրական թեմայով բանաստեղծությունների միջև:

Եղիշե Չարենց
«Ես իմ անուշ Հայաստանի»

Համո Սահյան
«Անունդ տալիս»



Առասպելները, «Սասունցի Դավիթ» էպոսն ուսումնասիրելիս կարելի է ծանոթացնել ճարտարապետական հուշարձաններին, դրանց հեղինակներին: Աշակերտները ձևակերպեն խոսք՝ ինչքանով են հերոսների մասին իրենց պատկերացումները համապատասխանում քանդակագործների մտահաղացումներին:

Հայկ Դյուցազն

Տորք Անգեղ	
Սասունցի Դավիթ	

Հեթանոս աստվածներ	

Ինտեգրված դաս կարելի է ստեղծել ոչ միայն օտար լեզուների և հայոց լեզվի ձևաբանական, շարահյուսական և բառակազմական կանոնների միջև զուգահեռներ անցկացնելով, այլև ցույց տալով հնդեվրոպական մայր լեզվի հնչյունների փոփոխությունը հայերենում, քանի որ ազգակցությունը որոշվում է հնչյունական հատուկ օրենքներով:

Հնչյունական օրենքներն իմանալուց հետո արդեն հասկանալի են տարբեր լեզուների բառային ընդհանրությունները և նրանց հնչյունական տարբերությունները:

Հնդեվրոպական հիմք-լեզի բառակազբի v(w)-ն հայերենում դարձել է g

vedo-գետ

worg-գործ

th-ն դարձել է թ

erth-երթ

k-ն դարձել է ս

kar-սառ(ն)

dekm-տասն

d-ն դարձել է տ

dom-տուն

g-ն դարձել է ծ, կ

argato-արծաթ

gov-կով

rego-երեկո

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով վերը նկարագրվածը՝ ամրագրենք, որ միջառարկայական կապերը օգնում են դիմակայել հանրակրթության մարտահրավերներին և բարձրացնել ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը: Միջառարկայական կապերի օգտագործումը հնարավորություն է տալիս միևնույն առարկայի կամ երևույթի, անձի և իրադրության մասին տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքներն ու տեղեկությունները միավորել մեկ ընդհանուր համակարգի մեջ: Դա օգնում է բացատրվող նյութի ճիշտ ու խոր յուրացմանը, անցածի ու անցնելիքի միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, ձեռք բերած գիտելիքների ու կարողությունների փոխանցմանն ու օգտագործմանը, որը հսկայական զարգացնող արժեք ունի երեխաների համար:

Ուսուցման պրոցեսում աշակերտների գործունեության և պահանջմունքների, նպատակների, հետաքրքրությունների համապատասխանությունից կախված, նյութը և մեթոդներն ընտրելիս անհրաժեշտ է մշտապես հաշվի առնել տվյալ դասարանը, նրա առանձին խմբերը կազմող աշակերտների հնարավորությունները, պահանջմունքները, շարժառիթներն ու հետաքրքրությունները։

Պարզ դարձավ,որ ուսուցման գործընթացում միջառարկայական կապերին կարևոր տեղ հատկացնելը ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են և դրա պահպանումը ժամանակակից դպրոցում ուսուցման կարևորագույն սկզբունքներից մեկն է:

Բովանդակություն.

1. Առաջաբան

2. Միջառարկայական կապեր

3. Եզրակացություն